

25.12.2014 10:06



Ինչպես հանրապետության շատ կառույցներ, ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը ևս Ամանորի նախօրյակին ամփոփեց անցնող տարին:

ԿԸՀ նախագահ Սրբուհի Արզումանյանը նախ հանգամանալից ներկայացրեց 2014-ի կատարված աշխատանքներն ու գալիք տարվա անելիքները, այնուհետև պատասխանեց լրագրողների հարցերին:

2014թ. Արցախի 13 համայնքներում անց են կացվել տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) 6 հերթական և 7 արտահերթ ընտրություններ: Ընտրված համայնքների ղեկավարներից ոչ մեկը չունի բարձրագույն կրթություն: Կուսակցական պատկանելության առումով երկուսն են կուսակցական, երկուսն էլ՝ 'Ազատ հայրենիք'-ից: Համայնքի ղեկավարների տարիքը բավականին երիտասարդացել է՝ հասնելով մինչև 40-ի սահմանը: Կանանց ներգրավվածությունն ինչպես համայնքի ղեկավարների, այնպես էլ ավագանու անդամների թվում կազմում է 32%:

Անցնող տարին նշանավորվեց տեղական հանրաքվեների կազմակերպմամբ. ԼՂՀ կառավարության որոշմամբ հուլիսի 20-ին Մարտունու շրջանի ճարտար և Ղուզե ճարտար համայնքներում անցկացված հանրաքվեների արդյունքում ճարտարցիների մեծ մասը (90%-ից ավելին) համաձայնվեց երկու համայնքների միավորմանը: Դրա հիման վրա 2015թ. հունվարի 18-ին տեղի կունենան ճարտարի քաղաքապետի և քաղաքային համայնքի ավագանու ընտրություններ:



Ս. Արզումանյանի գնահատմամբ՝ 2014 թվականն ընտրությունների անցկացման առումով համեմատաբար ոչ ծանրաբեռնված տարի էր: Անցնող տարում ընտրական հանձնաժողովների հիմնական գործունեությունը նպատակաուղղված էր առավել կատարելագործված ընտրական օրենսդրական դաշտի ապահովմանն ու դրան համապատասխան՝ 2015թ. սպասվող համապետական և տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների նախապատրաստմանը:

Ո՞րն էր ընտրական նոր օրենսգրքի ընդունման նպատակը: ԿԸՀ նախագահի խոսքով՝ գործող օրենսգիրքը 10 տարվա պատմություն ունի և հիմք է ծառայել թե՛ համապետական նշանակության ընտրությունների և թե՛ գործածական էր ՏԻՄ ընտրությունների համար: Նշված ժամանակաշրջանում տարբեր շահագրգիռ անձանց, կազմակերպությունների ու պետական կառույցների, ինչպես նաև՝ արտերկրից հրավիրվող դիտորդների կարծիքների, առաջարկությունների հաշվառմամբ անհրաժեշտություն առաջացավ ավելի կատարելագործված օրենսգիրք ունենալ, որին դրական արձագանքեցին ինչպես խորհրդարանական, այնպես էլ արտախորհրդարանական ուժերը: Նոր օրենսգրքի ընդունումը պայմանավորված էր նաև նոր ձևավորվելիք Ազգային ժողովի առանձնահատկությամբ (խոսքը մշտական հիմունքներով Աժ-ի գործունեության մասին է): Ըստ Ս. Արզումանյանի՝ որոշ սրբագրումներ էին պետք նաև իշխանության այս թևի ձևավորման մեխանիզմներ սահմանող իրավական փաստաթղթերում: Բացի այդ, նոր օրենսգրքով առավել հստակ ու մատչելի աշխատանքային պայմաններ են ստեղծվում ընտրական հանձնաժողովների համար, իսկ վերջիններիս աշխատանքի որակից է նաև կախված ընտրությունների ելքը:

ԿԸՀ նախագահն անդրադարձավ օրենսգրքի ընդունման գործընթացին ներգրավված պետական մարմիններին և այն շահագրգիռ կազմակերպություններին, որոնք ակտիվություն են ցուցաբերել քննարկումների ժամանակ:

Խոսելով հիմնական նորույթների մասին՝ Ս. Արզումանյանը հատկանշեց համամասնական և մեծամասնական մանդատների փոփոխությունը. գալիք խորհրդարանական ընտրություններում համամասնական և մեծամասնական ընտրակարգով ընտրվողների մանդատների հարաբերակցությունը գործող 17 համամասնական և 16 մեծամասնականի փոխարեն կլինի 22 համամասնական և 11 մեծամասնական: Խորհրդարան մտնելու համար նվազեցվել է նվազագույն շեմը. կուսակցությունների համար 5, կուսակցությունների դաշինքների համար 7%՝ գործող 6-ի և 8-ի փոխարեն:

Օրենսգրքում թերևս ամենից շատ փոփոխությունների ենթարկվածը ժամկետներն են. վերանայվել են շուրջ 200 ժամկետներ՝ հիմնականում կրճատումների տեսքով, ինչը սակայն որևէ սահմանափակումներ ու խոչընդոտներ չի ստեղծի ընտրական գործընթացի մասնակիցների ընտրական իրավունքների լիարժեք իրականացման համար:

Մի շարք այլ կարևոր հարցերից ԿԸՀ նախագահը մատնանշեց ԱԺ ընտրություններում կուսակցական ցուցակներում կանանց ներգրավվածության խնդիրը: Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների ժամանակ կուսակցությունների կողմից ներկայացվող ցուցակներում՝ սկսած երկրորդ համարից, յուրաքանչյուր հնգյակում սեռերի բաշխվածությունը պետք է լինի 80/20 հարաբերակցությամբ:

Ս. Արզումանյանն անդրադարձավ նաև սահմանափակ ֆիզիկական կարողություններ և քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների քվեարկության կարգի, նախընտրական քարոզչության և դրանց առանձնահատկությունների մասին, պարզաբանումներ տվեց ընտրագրավի, ՉԼՄ-ների լիազորությունների, ՏԻՄ ընտրությունների առանձնահատկությունների վերաբերյալ:

Ամփոփելով ընտրական նոր օրենսգրքի շուրջ արված պարզաբանումները՝ ԼԴՀ ԿԸՀ նախագահը համոզմունք հայտնեց, որ դրա ընդունումն առավել կազմակերպված ու հրապարակային ընտրություններ ապահովելու իրավական նախադրյալներ է ստեղծել: Սակայն առավել կարևոր է, որ ժողովրդավարական ընտրությունների անցկացման ճանապարհին հիմնական մարտահրավեր շարունակենք դիտել դրա բարեխիղճ իրագործումն ու գործընթացի բոլոր մասնակիցների կողմից քաղաքական կամքի դրսևորումը՝ դա համարելով յուրաքանչյուրի բարոյական պարտքը:

Գալիք տարին հավանաբար կլինի լարված և ընտրություններով ծանրաբեռնված. մայիսի առաջին տասնօրյակում կանցկացվեն խորհրդարանական ընտրությունները, իսկ հանրապետության 200-ից ավելի համայնքներում, այդ թվում Ստեփանակերտ քաղաքում, օգոստոսին ՏԻՄ ընտրություններ են սպասվում: Բացի այդ, բոլոր շրջաններում և Ստեփանակերտ քաղաքում փետրվար-մարտ ամիսներին կկազմակերպվեն մասնագիտական դասընթացներ՝ տարածքային ընտրական հանձնաժողովների (ՏԸՀ-եր) կազմերի համալրման նպատակով: Այս առումով նախապատրաստական աշխատանքներն արդեն իսկ սկսված են:

Լաուրա ԳՐԻԳՈՐՅԱՆ

http://artsakhtert.com/arm/index.php?option=com_content&view=article&id=8056%3A2014-12-25-07-44-55&catid=1%3A2010-11-23-08-19-24&Itemid=1